

ԱՆՑԵԱԼՔ

ԴԵՐԱՍԱՆ ԱՐՇԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ

Յովհ. Արեւելանից յետոյ երկրորդ ծանր կորուստն է, որ կրում է հայ բեմը: Յուլիս 27-ին, Երեւանում վախճանել է վաստակաւոր դերասան Արշ. Յարութիւնեանը:

Ծնւել է 1869 թւին Թիֆլիզում: Կրթութիւնը ստացել է Ներսիսեան դպրոցում: Մեծ դերասան Պետրոս Աղամեանի ներկայացումներէց տպաւորւած, Ա. Յարութիւնեանը որոշում է նւիրել հայ բեմին եւ մտնում է Գ. Զմշկեանի ու Տէր - Դաւթեանի խմբերի մէջ: Շուտով ժողովրդական համբաւ է ձեռք բերում եւ գրաւում է պատկառելի տեղ դերասանական ընտանիքի մէջ: Աչքի է ընկնում որպէս Գ. Սունդուկեանի տիպերի լաւագոյն դերակատար՝ երկար տարիներ կատարելով Պէպոյի, Զիմզիմովի («Պէպո»), Զամբախովի («Սաթարալա»), Փարսիղի («Քանդած օջախ») դերերը: Ա. Յարութիւնեանի յաջողւած դերերի շարքին են պատկանում նաեւ Նազոն («Օթէլլօ»), Սուլէյման խանը («Դաւաճանութիւն»), Սաղաթէլը («Պատուի համար»), Մետտերնիխը («Արծւիկ») եւ այլն:

Բացի Թիֆլիզի Դրամատիկ. Ընկերութեան ներկայացումներէց, հանդուցեալը մեծ սիրով եւ ձրիաբար մասնակցել է նաեւ Աւճալեան ժողովրդական թատրոնին, Արաքսեանի թատրոնին եւ Զուբալովեան ժողովրդ. Տան ներկայացումներին, ինչպէս եւ Բազում (Բալխանի, Սեւ քաղաք, Բիբի - Հէյբաթ) կազմակերպւած հանրամատչելի ներկայացումներին: Շրջել է մեր դերասանական խմբերի հետ Ռուսաստանի զանազան քաղաքները, ինչպէս եւ Իրան ու Պօլիս՝ ամէն տեղ մեծ յաջողութիւն գտնելով:

Անդրկովկասի խորհրդայնացումից յետոյ, Ա. Յարութիւնեանը աշխատում էր սկզբում Թիֆլիզի հայ թատրոնում եւ ապա փոխադրւում է Լենինական: 1927-ին հաստատւում է Երեւանում, որտեղ մասնակցում է մերթ ընդ մերթ մի շարք ներկայացումների, բայց շուտով ընդմիջտ թողնում է բեմը, հիւանդութեան պատճառով: 1934 թ. Երեւանում տօնեց նրա բեմական գործունէութեան 45-ամեայ յորբելանը:

Ի դէմս Արշակ Յարուժիւնեանի հայ բեմը կորցնում է մեր տա-
ղանդաւոր դերասաններից մէկին, որ երկար տարիներ ծառայել է
հայ թատրոնի բարդաւաճման :

ՄԻՔԱՅԷԼ ՄԻՆԱՍԵԱՆ

Օգոստոս 3-ին Բըրքլիի մէջ (Քալիֆ.) վախճանուել է Պրոֆ. Մ.
Մինասեան, որ ծանօթ էր թէ՛ որպէս կրթական մշակ եւ թէ՛ որպէս
գրչի մարդ։ Ննեւ էր Խարբերդ, 1865 թ.։ Իր ուսումը ստացել էր
Պարտիզակի ամերիկեան բարձրագոյն քոլէջում, որտեղից շրջանա-
ւարտ լինելուց յետոյ, նւիրեց ուսուցչութեան նախ Ադանայի, ապա
Տարսոնի մէջ։ Ուսուցչութեան առաջին իսկ շրջանից սկսեց աշխա-
տակցել Պօլսոյ «Իւրախն» թերթին։

1897-ին, հրատարակելով թրքական հայատալուծիւնից, անցնում
է Ամերիկա եւ մտնում Նէյլի համալսարանը, մասնագիտութիւն ըն-
տրելով քիմիաբանութիւնը։ Աւարտելուց յետոյ, 1900-ին անցնում է
Հարվըրտ եւ մի տարի հետեւում է այնտեղի համալսարանի փիլիսո-
փայական դասընթացներին։ Ամերիկայի մէջ գրել սկսում է «Կոչ-
նակ»-ում, որի խմբագրութիւնն է վարում կարճ ժամանակով։ Չը
կարողանալով, սակայն, հանդուրժել մի քանի պատելիներէ ստեղ-
ծած մթնոլորտին՝ թողնում է պաշտօնը եւ 1901-ի վերջերը ձեռնար-
կում «Լոյս» դիտական եւ գրական հանդէսի հրատարակութեան։

Թիւրքիոյ Սահմանադրութիւնից յետոյ վերադառնում է երկիր
եւ Միացեալ Ընկերութեան կողմից կարգուում է նախ դպրոցների
ընդհ. քննիչ եւ ապա՝ տնօրէն Վանի վարժապետանոցին։ 1915 թւի
դոյամարտի ընթացքին իր հմտութիւնը ի սպաս է դնում Վանի Զին-
ւորական մարմնին՝ պատրաստելով անձուխ վառօդ։ Վասպուրականի
նահանջից յետոյ, անցնում է նորից Ամերիկա եւ, բնակութիւն հաս-
տատելով Բոստոնում, վարում է մի քանի տարի «Ազգ» օրաթերթի
խմբագրութիւնը, բայց այս անգամ էլ չի կարողանում ընդհանուր
լեզու գտնել ուսման վարձերի հետ եւ թողնում է շուտով թերթի խմբ-
ագրութիւնն ու տեղափոխուում Փրէզնօ (Քալիֆ.), որտեղ սկսում
է հրատարակել Սիւաւան պարբերաթերթը։ Յետոյ հաստատուում է
Բըրքլի եւ ամբողջ 12 տարի պաշտօնավարում Քալիֆորնիայի Համա-
լսարանի փորձնական հաւաքուծական ճիւղի մէջ։ Այս շրջանում
վերստին սկսում է հրատարակել իր «Լոյս»-ը, այս անգամ նոր ուղ-
ղութեամբ եւ անդերէն լեզուով։

Իր կեանքի վերջին տարիներին նւիրած էր Հայաստանի նախա-